Նիկոլո Մաքիավելի

ՏԻՐԱԿԱԼԸ

Il Principe

Niccolò Machiavelli (1469-1527)

Scritto nel 1513

ՏԻՐԱԿԱԼԸ

Նիկոլո Մաքիավելի (1469-1527)

Գրված է 1513 թվականին

Թարգմանիչ՝ Լիլիթ Մկրտչյան

Երևան, 2026 թ.

NovusLiber

Yerevan, 2026

ՀՏԴ 1(091)(450)
ԳՄԴ 87.3(4Իտ)
Մ 411

Armenian translation © 2026 Lilit Mkrtchyan
Հայերեն թարգմանություն © 2026 Լիլիթ Մկրտչյան

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Սույն գրքի որևէ մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական համակարգերում կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցներով (էլեկտրոնային, մեխանիկական, ձայնագրման, լուսապատճենահանման և այլն) առանց հրատարակչի գրավոր թույլտվության, բացառությամբ տեղեկատվական նպատակներով արվող կարճ մեջբերումների՝ հեղինակի կամ թարգմանչի անվան հստակ նշմամբ:

ISBN 978-9939-9381-5-8 (էլ. հրատ.)

ISBN 978-9939-9381-4-1 (տպագիր)

ISBN 978-9939-9381-4-1
9 789939 938141

ՏԻՐԱԿԱԼԸ

Նիկոլո Մաքիավելի (1469-1527)

Գրված է 1513 թվականին

Նիկոլո Մաքիավելիի «Տիրակալը» համարվում է քաղաքական մտքի ամենաազդեցիկ և հաճախ ամենավիճահարույց աշխատություններից մեկը: Այս գործը, գրված՝ իտալական Վերածննդի քաղաքական անկայունության ժամանակաշրջանում, ներկայացնում է իշխանության ձեռքբերման, պահպանման և կառավարման մեխանիզմների իրատեսական և երբեմն անսովոր անկեղծ վերլուծություն:

Մաքիավելին ուսումնասիրում է պետությունների տեսակները, նոր և ժառանգական իշխանությունների առանձնահատկությունները, բանակի և պատերազմի դերը, իշխանության պահպանման ռազմավարությունները, ինչպես նաև իշխանավորի վարքագծի բարոյական և գործնական սահմանները: Հեղինակը իշխանության բնույթը ներկայացնում է իրական քաղաքական փորձի և պատմական օրինակների հիման վրա՝ դարձնելով այս աշխատությունը քաղաքական ռեալիզմի հիմնարար դասական:

Սույն հրատարակությունը ներկայացնում է աշխատության նոր հայերեն թարգմանությունը, որը կատարվել է իտալերեն բնագրից՝ նաև հեղինակավոր անգլերեն և ռուսերեն տարբերակների հետ համադրությամբ: Թարգմանությունն ուղեկցվում է պատմական և բացատրական ծանոթագրություններով՝ նպատակ ունենալով հայ ընթերցողին մատուցել գիրքը հնարավորինս ընթերցելի և հավաստի ձևով:

Գիրքը նախատեսված է քաղաքական մտածողությամբ հետաքրքրվող ընթերցողների, պատմաբանների, հասարակագետների, ուսանողների և դասական փիլիսոփայական ու քաղաքական գրականության սիրահարների համար:

Խմբագրական նշում

Սույն հրատարակության թարգմանությունը կատարվել է մեծ ուշադրությամբ և խնամքով՝ ձգտելով հնարավորինս հավատարիմ մնալ բնագրի իմաստին, կառուցվածքին և գաղափարական ընթացքին՝ միաժամանակ պահպանելով հայերենի բնական հնչողությունն ու գրական արժանապատվությունը:

Տերմինաբանական և ոճական լուծումները ընտրվել են գիտակցաբար՝ հաշվի առնելով թե՛ բնագրի ներքին տրամաբանությունը, թե՛ հայերեն գրական ավանդույթը:

Թարգմանության նպատակն է եղել ստեղծել այնպիսի տեքստ, որը հայերենում կընթերցվի բնական և ամբողջական՝ առանց արհեստական «թարգմանվածության» զգացողության:

Միևնույն ժամանակ, ցանկացած թարգմանություն անխուսափելիորեն կրում է թարգմանչի լեզվական մտածողության և մեկնողական ընտրությունների հետքը: Այդ պատճառով «Novus Liber» հրատարակչությունը այս աշխատանքը դիտում է որպես հեղինակային թարգմանություն՝ իրականացված լեզվական և մեկնողական ինքնուրույն մոտեցմամբ:

Ընթերցողներին և հետազոտողներին առաջարկվում է այն դիտարկել որպես թարգմանության հնարավոր տարբերակներից մեկը՝ բաց համեմատության, քննարկման և մեկնությունների համար:

Գրական լեզուն կենդանի համակարգ է, և որևէ հրատարակություն չի կարող հավակնել բացարձակ կատարելության:

Եթե ուշադիր ընթերցողները նկատեն տառասխալներ կամ տեխնիկական վրիպումներ, հրատարակչությունը միայն երախտագիտությամբ կընդունի դրանց վերաբերյալ տեղեկությունները՝ info@novusliber.com հասցեով:

ՆԱԽԱԲԱՆ

Նիկոլո Մաքիավելին եղել է Իտալական Վերածննդի ամենափայլուն և բազմակողմանի մտավորականներից մեկը, ում անունը դարձել է միաժամանակ քաղաքական իրատեսության խորհրդանիշ և բարոյական կասկածների առարկա: Նա ծնվել է Ֆլորենցիայում 1469 թվականի մայիսի 3-ին և մահացել է նույն քաղաքում՝ 1527 թվականի հունիսի 21-ին:

Մաքիավելիի «Տիրակալը» աշխատությունը մեր օրերում դարձել է բազմաթիվ մեկնաբանությունների առարկա: Նրա շարժառիթը, անկասկած, առաջին հերթին հայրենասիրական բնույթ է ունեցել: Սակայն քաղաքականության վերլուծության մեջ բարոյական նկատառումների բացառումը դեռևս իր ժամանակներում նրան որակավորել է որպես «սատանայական» ծայրահեղական: Ինչպիսին էլ լինի «Տիրակալում» ներկայացրած քաղաքական մեթոդների հարաբերությունը նրա անձնական իդեալների հետ, գիրքը մնում է Վերածննդի ժամանակաշրջանի Իտալիայի քաղաքական միջավայրի բացառիկորեն վառ և բնութագրական պատկերը:

Նրա «Քննարկումներ Տիտոս Լիվիոսի տասնամյակների շուրջ» աշխատությունը ավելի լայն մոտեցումով է անդրադառնում «Տիրակալում» արծարծված բազմաթիվ խնդիրների՝ *stato*-ի (իշխանական կառույցի), *virtù*-ի (գործնական քաղաքական կարողության) և *fortuna*-ի (պատահականության ու անկանխատեսելի հանգամանքների ուժի) փոխհարաբերությանը: Նրա «Պատերազմի արվեստը» զարգացնում է նույն մոտեցումները ռազմական ոլորտում: Իսկ «Ֆլորենցիայի պատմությունը», «Կաստրուչո Կաստրականիի կյանքը» և

«Մանդրագոլա» կատակերգությունը ժամանակի ոգով գրված ստեղծագործություններ են:

Մաքիավելին միաժամանակ եղել է դիվանագետ և զինվորական, իսկ հետո՝ պատմիչ, բանաստեղծ և դրամատուրգ: Նա այն մարդկանցից է, ովքեր ամբողջականորեն մարմնավորել են իրենց դարաշրջանի մտավորականների արտասովոր բազմակողմանիությունը:

Մաքիավելիի բոլոր ստեղծագործություններից «Տիրակալը» ամենահայտնին է, և հիրավի արժանիորեն: Շատ սակավաթիվ գրական գործերի շուրջ են եղել այդքան հակասական քննարկումներ, որքան «Տիրակալը» գործի: Ոմանք այն դիտել են որպես բռնակալի ձեռնարկ: Մյուսներն այն ընկալել են որպես բռնակալության նուրբ հեգնանք, սակայն դրանցից ոչ մեկը ճշգրիտ չի փոխանցում նրա իրական նպատակը:

Մաքիավելին եղել է համոզված, թեև չափազանց ճկուն հանրապետական և բնավ չի ձգտել համընդհանուր բռնակալություն տարածել Իտալիայում: Հավանաբար, նա ուզում էր ցույց տալ, թե ինչպես կարելի է կառուցել այնպիսի *stato*՝ իշխանական կառույց, որը կունենա բավարար *virtù*՝ առաքինություն կամ կարողություն, *fortuna*-ի կամ բախտի փոփոխական հարվածները հաղթահարելու համար:

Որպես մեծ հայրենասեր նրա իրական նպատակը Իտալիան օտար տիրապետությունից ազատելն էր և հարենիքի անկախությունը վերականգնելը: Սակայն այս մտադրությունը նա չէր կարող բացահայտ ձևակերպել, և այդ պատճառով նրա գործը հաճախ ընկալվում է որպես հետադիմական, քանի որ *ragion di stato*-ն՝ պետական շահի տրամաբանությունը, որը նա առաջադրում է որպես բարոյական նորմերի խախտման

հիմնավորում, թվում է ոչ թե հայրենասիրական, այլ եսասիրական՝ առաջարկելով նպատակի կարևորությամբ արդարացնել նպատակին հասնելու համար կիրառված միջոցների բարոյական կասկածելիությունը:

Բոլոր մեկնաբանություններով հանդերձ, ոչինչ չի կարող Մաքիավելիին զրկել այն փառքից, որ քաղաքագիտության մեջ նա եղել է ժամանակակից Արիստոտելը՝ առաջինը, կամ առնվազն առաջին նշանակալի մտածողը, ով պատմությունից ածանցեց գործնական փիլիսոփայություն և պետական կառավարման արվեստը վերածեց գիտության:

Բովանդակություն

ՆՎԻՐՈՒՄ 1
ԳԼՈՒԽ I. Իշխանության տեսակների և դրանց ձեռքբերման եղանակների մասին 3
ԳԼՈՒԽ II. Ժառանգական իշխանությունների մասին 4
ԳԼՈՒԽ III. Խառը իշխանությունների մասին 6
ԳԼՈՒԽ IV. Ինչու Դարեհի[14] թագավորությունը չապստամբեց Ալեքսանդրի հետևորդների դեմ 21
ԳԼՈՒԽ V. Ինչպե՞ս կառավարել այն քաղաքները կամ երկրները, որոնք նվաճվելուց առաջ անկախ են եղել 26
ԳԼՈՒԽ VI. Սեփական զենքով և սեփական կարողությամբ ձեռք բերված նոր իշխանությունների մասին 29
ԳԼՈՒԽ VII. Նոր իշխանությունների մասին, որոնք ձեռք են բերվել ուրիշների զենքով կամ բախտի ողորմածությամբ 35
ԳԼՈՒԽ VIII. Նրանց մասին, ովքեր իշխանության հասել են ոճրագործությամբ 46
ԳԼՈՒԽ IX. Քաղաքացիական միապետության մասին 54
ԳԼՈՒԽ X. Ինչպես չափել տերությունների ուժը 61
ԳԼՈՒԽ XI. Եկեղեցական տերությունների մասին 65
ԳԼՈՒԽ XII. Վարձկան զորքերի մասին 69
ԳԼՈՒԽ XIII. Դաշնակցային, խառը և սեփական զորքերի մասին 78
ԳԼՈՒԽ XIV. Զորքի նկատմամբ տիրակալի վերաբերմունքի մասին 84
ԳԼՈՒԽ XV. Ինչի համար են գովաբանում կամ դատապարտում մարդկանց, և հատկապես տիրակալներին 88
ԳԼՈՒԽ XVI. Առատաձեռնության և ժլատության մասին 91

ԳԼՈՒԽ XVII. Դաժանության և գթասրտության մասին. Ի՞նչն է ավելի լավ՝ երբ ժողովուրդը սիրում է տիրակալին, թե երբ վախենում է նրանից 94
ԳԼՈՒԽ XVIII. Տրված խոսքին հավատարիմ լինելու մասին 100
ԳԼՈՒԽ XIX. Ինչպես պետք է տիրակալը խուսափի արհամարհանքից և ատելությունից 105
ԳԼՈՒԽ XX. Արդյոք ամրոցներն ու մյուս միջոցները, որոնցից հաճախ օգտվում են տիրակալները, օգտակար են, թե վնասակար 120
ԳԼՈՒԽ XXI. Ինչ պետք է անի տիրակալը հարգանք ու հեղինակություն վաստակելու համար 128
ԳԼՈՒԽ XXII. Տիրակալի խորհրդականների և խելքի մասին 133
ԳԼՈՒԽ XXIII. Ինչպես խուսափել շողոքորթներից 135
ԳԼՈՒԽ XXIV. Ինչու Իտալիայի տիրակալները կորցրին իրենց պետությունները 138
ԳԼՈՒԽ XXV. Բախտի իշխանությունը մարդկային գործերի վրա և նրան դիմակայելու եղանակները 141
ԳԼՈՒԽ XXVI. Հորդոր՝ Իտալիան բարբարոսներից ազատելու մասին 145
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 151

ՆՎԻՐՈՒՄ

Ձերդ Պայծառափայլություն,
Լորենցո դի Պիերո դե՛ Մեդիչիին

Սովորաբար նրանք, ովքեր ցանկանում են շահել իշխանի բարեհաճությունը, ընծայում են այնպիսի նվերներ, որոնք իրենց կարծիքով առավել արժեքավոր են և առավել հաճելի կլինեն նրան: Ուստի հաճախ իշխաններին մատուցում են ձիեր, զենք, ոսկեթել գործվածքներ, թանկարժեք քարեր և նմանօրինակ իրեր, որոնք արժանի են նրա մեծությանը:

Ցանկանալով Ձերդ Պայծառափայլությանը մատուցել իմ լիակատար նվիրվածության վկայությունը, ես իմ ունեցվածքի մեջ չգտա որևէ բան, որն ինձ համար ավելի թանկ կամ ավելի բարձր արժեք ունենար, քան մեծ մարդկանց գործերի իմացությունը, որը ես ձեռք եմ բերել ժամանակակից իրադարձություններին երկարամյա մասնակցությամբ և հին ժամանակների դեպքերի խորամուխ ուսումնասիրությամբ: Այդ ամենի շուրջ երկար մտորելուց հետո ես մեծ հոգատարությամբ շարադրեցի իմ եզրակացությունները մի փոքր աշխատության մեջ, որն այժմ ներկայացնում եմ Ձերդ Պայծառափայլությանը:

Թեև կարծում եմ, որ այս գործն արժանի չէ Ձեզ, այնուամենայնիվ, հուսապատար եմ, որ Ձեր կրթության հորդորով և իմացության ձգտումով Դուք կընդունեք այն, քանզի չեմ կարող Ձեզ ավելի մեծ ընծա մատուցել, քան այն կարողությունը, որի շնորհիվ Դուք կարճ ժամանակում կըմբռնեք այն ամենը, ինչ ես ինքս ընկալել եմ երկար տարիների ընթացքում՝ անցնելով բազմաթիվ դժվարությունների ու փորձությունների միջով:

Այս աշխատությունը ես չեմ ճոխացրել և չեմ ծանրաբեռնել հնչեղ կամ բարձրագոչ արտահայտություններով, ինչպես նաև որևէ արհեստական զարդարանքով, որոնցով շատերը սովոր են ճարտարացնել իրենց գործերը: Ես ցանկացել եմ, որ այն արժևորվի կամ մերժվի միայն իր բովանդակության բազմազանության և իմաստային լրջության շնորհիվ:

Չեմ ուզում, որ իմ արարքը հանդուգն համարվի, որպես նսեմ հասարակական դիրք ունեցող մարդու անհարիր համարձակություն և իշխանների կառավարման վերաբերյալ հարցեր քննարկելու և կանոններ սահմանելու հավակնություն:

Սակայն, ինչպես քարտեզագիրները՝ երկրների տեղանքը պատկերելիս, կանգնում են հարթավայրերում, լեռների և բարձրադիր վայրերի բնույթը ավելի լավ տեսնելու համար, իսկ հետո բարձրանում են լեռների վրա՝ ստորադիր վայրերը դիտելու համար, նույն կերպ ժողովուրդների բնույթը լավ ճանաչելու համար պետք է լինել իշխան, իսկ իշխանների բնույթը լավ ճանաչելու համար պետք է լինել ժողովրդից:

Ուստի թող Ձերդ Պայծառափայլությունը ընդունի իմ փոքրիկ ընծան այն տրամադրությամբ, որով ներկայացնում եմ: Եվ եթե Դուք ուշադիր ընթերցեք, կզգաք իմ ծայրահեղ կամեցողությունը, որ Դուք հասնեք այն մեծությանը, որը Ձեզ խոստանում են թե՛ բախտը, թե՛ Ձեր մյուս արժանիքները:

Եվ եթե երբևէ Ձեր բարձր դիրքից հայացք նետեք իմ կեցության վրա, հուսով եմ՝ կնկատեք, թե որքան անարդար են եղել ճակատագրի կողմից ինձ նախանշված փորձությունները:

Նիկոլո Մաքիավելի

ԳԼՈՒԽ I. Իշխանության տեսակների և դրանց ձեռքբերման եղանակների մասին

Բոլոր այն պետություններն ու տերությունները, որոնք երբևէ ունեցել են կամ ներկայումս ունեն մարդկանց կառավարելու իշխանություն, բնույթով կամ հանրապետություն են, կամ էլ կառավարվում են մեկ անձի՝ տիրակալի կողմից:

Տիրակալության տակ գտնվող պետությունները կարող են լինել երկու տեսակի՝ ժառանգական, երբ իշխանությունը ժառանգաբար փոխանցվում է նույն տոհմի սերունդներին, կամ՝ նոր, երբ իշխանությունը անցնում է նոր տիրակալի:

Նոր իշխանությունները նույնպես տարբեր են լինում: Ոմանք ամբողջությամբ նոր են, ինչպես Միլանը, որը մտավ Ֆրանչեսկո Սֆորցայի[1] իշխանության տակ:

Մյուսները միացված են միայն մասամբ: Դրանք կցվում են արդեն գոյություն ունեցող ժառանգական պետություններին, ինչպես եղավ Նեապոլի թագավորության դեպքում, երբ այն մտավ Իսպանիայի թագավորության իշխանության տակ:

Նման ձևով նվաճված պետություններում ժողովուրդը կամ արդեն սովոր է ենթարկվել իշխող տիրակալին, կամ էլ նախկինում ապրել է ազատության պայմաններում: Եվ նման տերությունները կարելի է նվաճել տարբեր եղանակներով՝ սեփական զորքի ուժով, ուրիշների զորքով, բախտի բարեհաճությամբ կամ սեփական կարողություններով:

ԳԼՈՒԽ II. Ժառանգական իշխանությունների մասին

Ես չեմ անդրադառնա հանրապետություններին, քանի որ դրանց մասին այլ տեղ մանրամասն գրել եմ: Այստեղ կխոսեմ միայն տիրակալությունների մասին և, հետևելով վերևում նշված կարգին, կքննարկեմ, թե ինչպես են այդպիսի պետությունները կառավարվում և պահպանվում:

Ամենից առաջ պետք է նշել, որ ժառանգական իշխանությունները, որոնց բնակչությունը երկար ժամանակ սովոր է մեկ իշխանական տոհմի կառավարմանը, շատ ավելի հեշտ է պահել, քան նոր իշխանությունները: Դրա համար բավարար է, որ տիրակալը չշեղվի իր նախորդների հաստատած կարգերից և հանգիստ գործողություններով ժամանակ շահելով՝ ձգտի զուտ արձագանքել հանգամանքների փոփոխությանը: Այդ դեպքում անգամ միջին կարողությունների տեր տիրակալը կկարողանա պահպանել իր իշխանությունը, եթե միայն որևէ ուրիշ բացառիկորեն ուժեղ զավթիչ իշխանությունը չխլի նրանից: Եվ նույնիսկ այդ դեպքում նա կարող է հետագայում վերադարձնել իր իշխանությունը, եթե զավթիչը ինչ-ինչ պատճառներով ձախողվի կամ կործանվի:

Իտալիայում դրա օրինակը դարձավ Ֆեռարայի դուքսը,[2] որը չդիմակայեց ո՛չ վենետիկցիների հարձակմանը 1484 թվականին,

ո՛չ էլ Հռոմի պապ Հուլիոս II-ի[3] 1510 թվականի հարձակումներին, սակայն չկորցրեց իր իշխանությունը, քանի որ վաղուց ամրապնդված էր իր երկրում: Դա պայմանավորված է նրանով, որ ժառանգաբար իշխող տիրակալը առանձնահատուկ պատճառ կամ կարիք չունի կեղեքելու իր հպատակներին և արդյունքում թշնամանք առաջացնելու իր դեմ: Ուստի նման տիրակալները, որպես կանոն, ավելի սիրված են իրենց ժողովրդի կողմից:

Եվ եթե նման տիրակալը արտառոց անձնական արատներ չունի, որոնք նրան անդառնալիորեն ատելի են դարձնում հպատակների աչքում, կարելի է ակնկալել, որ ժողովուրդը կշարունակի համակրել նրան: Դրանից բացի, իշխանության հնությունն ու սերնդափոխության շարունակականությունը օգնում են տիրակալներին, որ նախկին իշխանափոխությունների հետ կապված անբարեբախտ հիշողությունները և դրանց պատճառները հեշտությամբ մոռացության մատնվեն, որովհետև յուրաքանչյուր փոփոխություն իր հետ բերում է նոր փոփոխությունների նախադրյալներ:

ԳԼՈՒԽ III. Խառը իշխանությունների մասին

Սակայն իրական դժվարությունները ծագում են նոր կազմավորված իշխանություններում: Եվ առաջին հերթին, եթե դրանք լրիվ նոր չեն, այլ որպես այդպիսին, եղել են մի ավելի մեծ հին պետության մասը:

Դրանց կարելի է անվանել գրեթե խառը իշխանություններ: Դրանցում փոփոխությունները բխում են բոլոր նոր իշխանություններին բնորոշ ներքին բարդություններից: Քանզի մարդիկ հաճույքով փոխում են իրենց տիրակալներին՝ հույս ունենալով, թե դրանով կբարելավեն իրենց կյանքը, և այդ հույսն է նրանց դրդում զենք վերցնել իշխող տիրակալի դեմ: Սակայն նրանք ի վերջո հիասթափվում են, որովհետև փորձից շուտով համոզվում են, որ վատից անցել են ավելի վատին: Դրան հաջորդում է և՛ս մեկ օրինաչափ անհրաժեշտություն, որը ստիպում է նոր իշխանին՝ իր իշխանատիրության, զինվորների և բազմաթիվ այլ անարդարությունների ու կրած վնասների հետ կապված բեռը բարդել իր նոր հպատակների հին պարտավորությունների վրա, ինչն անխուսափելիորեն ուղեկցում է նոր տարածքային նվաճումներին:

Այդպիսով, տիրակալը թշնամիներ է ձեռք բերում ի դեմս բոլոր նրանց, ում վնասել է իշխանությունը նվաճելու

ճանապարհին, և միաժամանակ չի պահպանում իր բոլոր դաշնակիցներին, ովքեր օգնել են իրեն նվաճել այդ իշխանությունը, քանի որ չի կարող բավարարել նրանց բոլոր ակնկալիքները: Ի լրումն, նա չի կարող նաև խիստ միջոցներ կամ «ուժեղ դեղեր» կիրառել նրանց դեմ, այսինքն ոչնչացնել նրանց, որովհետև իրեն պարտական է զգում նրանց նկատմամբ: Քանզի նոր տիրակալը՝ նույնիսկ շատ հզոր ռազմական ուժով զինված, մի նոր նահանգ մտնելու համար, պետք է աշխատի նվաճել նաև տեղի բնակչության բարեհաճությունը:

Ահա թե ինչու Ֆրանսիայի թագավոր Լուդովիկոս XII-ը[4] արագ գրավեց Միլանը և նույնքան էլ արագ կորցրեց այն:

Առաջին անգամ նրան այնտեղից դուրս մղելու համար բավական էր ընդամենը հենց իսկ Լուդովիկոսի ռազմական ուժին համազոր մի հակադիր ուժ, որովհետև նրանք, ովքեր բացել էին դարպասները Ֆրանսիայի թագավորի առաջ, տեսնելով, որ խաբվել են իրենց շահերի բավարարման սպասելիքներում, չհանդուրժեցին նոր իշխանի վատ վերաբերմունքը:

Սակայն իրոք ճիշտ է, որ երբ տիրակալը երկրորդ անգամ է նվաճում ապստամբ նահանգները, դրանք այլևս այդքան հեշտ չեն կորսվի, քանի որ տիրակալը, առանց մեծ երկմտանքի կօգտագործի հնարավոր նոր ապստամբության դեմ գործելու ամեն մի չնչին առիթը՝ բոլոր խռովարարներին դաժանորեն պատժելու, կասկածելիներին վտարելու, և իր իշխանության թույլ հանգույցներն ամրապնդելու համար:

Այդպես՝ առաջին անգամ Միլանը ֆրանսիացիներից խլելու համար բավարար եղան հենց Միլանի նախկին դուքսի՝ Լուդովիկո իլ Մորոյի[5] ուժերը, բայց երկրորդ անգամ նրանցից ազատվելու համար պահանջվեց գրեթե ամբողջ աշխարհը հանել նրանց դեմ, որպեսզի ֆրանսիացիների բոլոր բանակները ջախջախվեն և դուրս մղվեն Իտալիայից, ինչն էլ տեղի ունեցավ վերը նշված պատճառներով:

Այնուամենայնիվ, Միլանը Ֆրանսիայից հետ վերցվեց և՛ առաջին, և՛ երկրորդ անգամ: Առաջին անգամվա ընդհանուր պատճառներն արդեն քննարկեցինք: Մնում է նշել երկրորդ անգամվա պատճառները և տեսնել, թե ինչ միջոցներ ուներ տիրակալը, և ինչ միջոցներ կունենար նրա դրության մեջ գտնվող ցանկացած ուրիշ իշխան, որպեսզի իր նվաճումն ավելի ապահով պահեր, քան դա արեց Ֆրանսիայի թագավորը:

Ես կասեի, որ այն իշխանությունները, որոնք նվաճվելուց հետո միացվում են նվաճողի պետությանը, կարող են լինել կամ նույն երկրից և նույն լեզուն կրող բնակչությամբ, կամ տարբեր: Երբ դրանք նույն երկրից են, ապա շատ ավելի հեշտ է դրանք պահելը, հատկապես եթե դրանք սովոր չեն եղել ինքնակառավարման: Եվ ուստի դրանք ապահով պահելու համար բավական է ամբողջությամբ բնաջնջել նախկին իշխանի տոհմը, որովհետև երկու ժողովուրդները, պահպանելով մնացած հարցերում իրենց նախկին կարգերը և սովորույթները, հանգիստ կշարունակեն ապրել միասին: Այդպես եղավ Բրետանիում, Բուրգունդիում, Գասկոնում և Նորմանդիում, որոնք շատ

վաղուցվանից կապված էին Ֆրանսիայի հետ:

Եվ անգամ երբ բնակչությունները որոշ լեզվական տարբերություններ ունեն, բայց նրանց սովորույթներն ընդհանուր առմամբ նման են, ժողովուրդները հեշտությամբ են հարաբերվում և շարունակում են հաշտ ապրել միմյանց հետ: Ուստի այն տիրակալը, որը զավթել ու իր տերությանն է միացրել դրանց նման տերություններ, եթե ցանկանում է պահել նոր ձեռքբերումները, պետք է հիշի երկու բան: Առաջինը, որ նախկին տիրակալի տոհմը պետք է բնաջնջվի ամբողջովին: Երկրորդը, որ ինքը պետք է աշխատի չփոխել տեղական օրենքներն ու հարկերը: Այդ դեպքում դրանք շատ կարճ ժամանակում մի ամբողջություն կդառնան իր հին պետության հետ:

Սակայն, երբ պետությունները նվաճվում են մի երկրում, որտեղ բնակչությունը խոսում է ուրիշ լեզվով, որտեղ գործում են այլ սովորույթներ կամ օրենքներ, ապա դժվարությունները շատ ավելի մեծ կլինեն, և դրանք հաղթահարելու համար անհրաժեշտ են նպաստավոր հանգամանքներ և մեծ կարողություններ: Այդ դեպքում ամենամեծ և ամենահիրական միջոցը կլինի այն, որ նվաճող տիրակալն անձամբ բնակություն հաստատի իր նվաճած երկրում: Դա նրա դիրքն ավելի ամուր և կայուն կդարձնի, ինչպես եղավ թուրքերի դեպքում՝ Հունաստանում:

Եթե թուրքն այնտեղ բնակություն չհաստատեր, ապա, նույնիսկ իր մյուս բոլոր զավթողական գործողություններով, չէր կարողանա պահել երկիրը: Քանզի, երբ տիրակալը բնակվում է իր տիրապետած երկրում, անկարգությունները տեսանելի են

դառնում նրան անմիջապես ծագելու պահին, և տիրակալը կարող է արագ վերացնել դրանք: Իսկ երբ նա հեռու է իր նոր նվաճած տերությունից, ապա դրանցում ծագած խռովությունների մասին կիմանա միայն այն ժամանակ, երբ արդեն ուշ կլինի միջամտելու համար: Դրանից բացի, երկիրը չի թալանվի տիրակալի պաշտոնյաների կողմից, ժողովուրդը գոհ կլինի իշխանության արագ վերականգնումից: Եվ ուստի, եթե բնակչությունը ցանկանա բարեհաճություն դրսևորել՝ ավելի շատ հիմքեր կունենա իր նոր տիրակալին սիրելու համար: Իսկ եթե ցանկանա դիմադրել, ապա նաև վախենալու ավելի շատ հիմքեր կունենա նոր տիրակալից: Նման պետության վրա դրսից հարձակվողը պետք է մեծագույն զգուշություն ցուցաբերի, որովհետև, քանի որ տիրակալն այնտեղ է բնակվում, այդ պետությունը նրանից խլելը հնարավոր կլինի միայն մեծ դժվարությամբ:

Մյուս ավելի լավ մարտավարությունը դա գաղութարար բնակչություն ուղարկելն է մեկ կամ մի քանի կարևոր վայրեր, որոնք կդառնան այդ նոր պետությունը պահող հենակետեր՝ այնտեղ մեծաթիվ հեծելազոր և հետևակ պահելու փոխարեն: Ընդ որում, գաղութները սովորաբար շատ ծախսատար չեն տիրակալների համար: Եվ ուստի տիրակալը կարող է չնչին ծախսերով գաղութացնող բնակչություն ուղարկել նոր գրավված տարածքներ և հեշտությամբ ամրապնդել այնտեղ իր իշխանությունը: Արդյունքում նա ստիպված կլինի վնասել գրավված տարածքի տեղական բնակչության միայն փոքրամասնությանը, միայն նրանց, որոնցից հողեր ու տներ է

վերցրել՝ գաղութացնող բնակիչներին տալու համար: Իսկ ունեցվածքից զրկվածներն ու կեղեքվածները, աղքատ և ցրված, երբեք չեն կարողանա վնասել նոր իշխանին: Մինչդեռ մնացածները, ովքեր չեն վնասվել, ավելի հեշտությամբ կխաղաղվեն ու կհամակերպվեն, որովհետև կվախենան նույն ճակատագրին արժանանալուց:

Եզրափակելով ասեմ, որ գաղութները ծախսատար չեն: Դրանք ավելի հավատարիմ են, ավելի քիչ են վնասվում տեղացիների կողմից, որովհետև երկրի աղքատացած ու բարոյալքված տեղական բնակչությունը, անկարող է վնասել դրանց:

Այստեղ պետք է նկատել, որ գրավված երկրների մարդկանց պետք է կամ լավ վերաբերվել կամ ամբողջովին ջախջախել, որովհետև թեթև վնասից մարդիկ կարող են վերականգնվել, վերադիրքավորվել և հակահարվածել՝ վրեժ լուծելու նպատակով, իսկ ծանր կորուստների դեպքում ոչինչ չեն կարողանա անել: Հետևաբար, մարդուն հասցվող վնասը պետք է այնքան լիակատար լինի, որ նրա վրեժից վախենալու առիթ չմնա:

Եվ հակառակը՝ գաղութների փոխարեն զինվորական կայազորներ պահելու համար տիրակալին շատ ավելի մեծ ծախսեր են պետք, քանի որ պետությունից հավաքված ամբողջ եկամուտը կծախսվի ռազմական կայազորի վրա, և ուստի նվաճումը կվերածվի վնասի: Դրանից բացի, շատ ավելի մեծ թվով մարդիկ պատճառ ու հիմքեր կունենան դժգոհություն արտահայտելու համար: Որովհետև ամբողջ պետությունը

կտուժի կայազորի մշտական տեղաշարժերից, ինչից ամբողջ տեղական բնակչությունը կթշնամանա նոր իշխանի դեմ: Իսկ պարտված թշնամիների թվում անպայման կլինեն այնպիսիք, ովքեր դեռևս ունակ են հակադրվելու և վնասելու նոր իշխանին: Ուստի ամեն դեպքում զինվորական կայազորներ պահելը նույնքան սխալ է, որքան ճիշտ է վերաբնակեցված գաղութներ ստեղծելը:

Ի լրումն, տիրակալը, որն իշխում է նման տարբերություններով երկրում, պետք է իրեն դարձնի տարածքում եղած թույլ հարևանների առաջնորդն ու պաշտպանը՝ միաժամանակ թուլացնելով նրանցից առավել հզորներին, հոգալով, որ իրեն համազոր որևէ օտար ուժ հանկարծ չմտնի այդ տարածքը: Քանի որ միշտ կգտնվեն դժգոհներ, ովքեր պատրաստ կլինեն օտար ուժ հրավիրել՝ առաջնորդվելով կամ իրենց չափազանց մեծ հավակնություններով, կամ վախով, ինչպես արդեն բազմիցս եղել է, պատմության մեջ: Այդպես եղավ, երբ էտոլացիները հռոմեացիներին Հունաստան բերեցին, և նույնը եղավ ուրիշ երկրներում, ուր հռոմեացիները մտան տեղական բնակչության հրավերքով և օժանդակությամբ:

Պատմության ընթացքը սովորաբար հենց այդպես է դրսևորվում: Երբ որևէ հզոր երրորդ ուժ է մտնում նվաճված երկիր, բոլոր ենթարկված փոքր տերություններն անմիջապես միանում են նրան՝ համախմբվելով նվաճող տիրակալի դեմ իրենց միավորող ատելությամբ: Ուստի տիրակալը չպետք է ընդհանրապես ջանքեր գործադրի իրեն ենթակա

պետություններին միավորելու համար: Որովհետև նրանք ամեն դեպքում արագ կմիավորվեն, բայց իր դեմ: Նա պետք է միայն հետևի, որ նրանք չափից շատ ուժ և իշխանություն չկուտակեն, և այդ ժամանակ իր սեփական ուժերով ու մյուսների բարեհաճությամբ ինքը հեշտությամբ կզսպի նրանցից ամենահզոր անհնազանդներին և կդառնա երկրի լիակատար տերը: Իսկ նա, ով այդ համամասնությունը պատշաճ չպահպանի, շուտով կկորցնի նվաճածը: Եվ եթե ձգտի պահպանել, ապա ստիպված կլինի դիմակայել անվերջանալի դժվարությունների ու կորուստների:

Հռոմեացիները խստորեն հետևում էին այս կանոններին բոլոր այն երկրներում, որոնք նվաճում էին. ուղարկում էին գաղութարարների, ձգտում էին բարեկամական հարաբերություններ պահպանել փոքր իշխանությունների հետ, միևնույն ժամանակ ամեն ինչ անելով, որպեսզի դրանք չհզորանան: Զսպում էին խոշորներին և թույլ չէին տալիս, որ ուժեղներն ավելի մեծ իշխանություն ձեռք բերեն: Հունաստանը դրա վառ օրինակն է: Հռոմեացիք բարեկամական հարաբերություններ պահպանեցին աքայացիների և էտոլացիների[6] հետ, խոնարհեցրին Մակեդոնիայի թագավորությունը, վտարեցին Անտիոքոսին,[7] բայց երբեք թույլ չտվեցին, որ աքայացիներն ու էտոլացիները հզորանան, և ոչ Ֆիլիպոսին[8] հաջողվեց համոզել հռոմեացիներին, որ տիրակալություն տան իրեն, քանի դեռ չէր հպատակվել նրանց, ոչ

էլ Անտիոքոսի ազդեցությունը ստիպեց նրանց, որ վերջինիս թույլ տան որևէ տերություն ունենալ այդ երկրում:

Հռոմեացիներն այս օրինակներում արեցին այն, ինչը պետք է անի յուրաքանչյուր ողջամիտ տիրակալ, ով պարտավոր է հաշվի առնել ոչ միայն ներկա դժվարությունները, այլև տեսնել ապագան, ինչի համար պետք է պատրաստվի՝ ոչ մի ջանք չխնայելով: Քանի որ, երբ խնդիրները կանխատեսված են, ավելի հեշտ է դրանք հաղթահարելը, իսկ եթե սպասեք, մինչև դրանք մոտենան, սպեղանին անօգուտ կլինի, որովհետև հիվանդությունը կհասցնի դառնալ անբուժելի:

Այդպես բժիշկներն են ասում թոքախտի մասին, որ սկզբում այն հեշտ է բուժելը, թեև դժվար է ճանաչելը, իսկ հետո՝ հեշտ է ճանաչելը, բայց դժվար է բուժելը:

Նույնը կարելի է ասել պետության կառավարման ջանքերի մասին. եթե չարիքները կանխատեսված են (ինչն ի զորու է միայն իմաստուն տիրակալին), դրանք արագ են վերացվում, իսկ եթե դրանք բարձիթողի աճել ու խորացել են, ապա այլևս փրկություն չկա:

Այդ պատճառով հռոմեացիները, կանխատեսելով վտանգները, անմիջապես հակազդում էին դրանց՝ չխուսափելով նաև պատերազմից: Նրանք թույլ չէին տալիս, որ հավակնորդներն իշխանության հասնեն, որովհետև գիտեին, որ պատերազմն անխուսափելի է: Իսկ պատերազմի հետաձգումը ծառայում է միայն հակառակորդի շահին: Նրանք նախընտրեցին պատերազմել Ֆիլիպոսի և Անտիոքոսի դեմ Հունաստանում,